

փոխառութիւնների ցանկում զետեղելը ճիշտ մօտեցում է:

Դրանք օտար բառեր են, եւ Հայ ընթերցողի համար յաճախ բուն իմաստն աւորոշ է:

Այս հանգամանքը, թերեւս, գիտակցել է նաեւ Բուզանդը՝ մի շարք դէպքերում տուեալ բառի հետ գործածելով ընթերցողին (նկատի ունենք Ե. դարի) հասկանալի հոմանիշը: Օրինակ՝

Մազդեզագն-մոգուցն - «...դի եթող զօրէնս քրիստոնէութեան, եւ կալաւ զօրէնս մազդեզացն, այսինքն զմոգուցն. եպագ երկիր արեգական եւ կրակի...» (IV, ԻԳ): Օրէն(ք) այս համատեքստում նշանակում է «կրօն». Բուզանդը նկատի ունի զրադաշտական կրօնը:

Մոգ, Մազդեզն իրանական ծագում ունեցող բառեր են: Գրաբարում յաճախական է մոգ-ը: Այն առկայանում է նաեւ մի շարք բառերի կազմում. մոգակամ, մոգակրօն, մոգակրօնիկ, մոգեան, մոգեմ, մոգութիւն, մոգապաշտէ, մոգպետ): Նոյնը չենք կարող ասել Մազդեզն, օրէն մազդեզացի մասին: Այդ պատճառով էլ մազդեզացն Բուզանդը թարգմանում է մոգուցն: Նկատենք մի իրողութիւն եւս. մոգ-ը գրաբարում միայն իրանական կրօնին չէր վերաբերում: Ըստ ՆՀԲ-ի՝ «մարգարէ հեթանոսաց, սուտ գուշակ, հմայող, քաղզեայ, աստեղագէտ...»: Բուզանդը տեղեակ էր բառի բազմիմաստութեանը եւ որպէսզի շեշտեր

իրանական կրօնին վերաբերելը, այսինքն զմոգուցն-ից յետոյ յաւելում է «եպագ արեգական եւ կրակի», իսկ արեգակին եւ կրակին երկրպագելը բնորոշ է զրադաշտականներին:

Մոգ-ը հայերէնում կայ եւ մով ձեւով, նաեւ՝ մովպետ, մովամ աճորձապետ եւ այլն: Մոգ-ը փոխառութիւն է պարթեւերէնից, իսկ մով-ը՝ միջին պարսկերէնից:

Ոստիկան-վերակացու - «Եւ անդէն յերկիրն Հայոց ոստիկանս թողին եւ վերակացուս» (IV, ԾԷ): Ոստիկանը գրաբարում բազմիմաստ է (տե՛ս ՆՀԲ): Տուեալ համատեքստին յարիր իմաստի հասկանալիութեան համար հեղինակը յաւելում է վերակացու բառը: Հոմանշային այս դոյզը առկայ է նաեւ մէկ այլ օրինակում. «...վերակացուս եւ ոստիկանս յերկիրն Աղձնեաց թողուին» (V, ԺԶ): Ն. Աղոնցը նշում է, որ ոստիկանի իմաստը բացայայտում է վերակացու բառը<sup>8</sup>:

Ամփոփում: Բուզանդի Պատմութեան բառապաշարի քննութիւնից ակնյայտ է դառնում հեղինակի՝ պարսկերէնի իմացութիւնը: Իրանական լեզուների մի շարք բառեր առաջին անգամ վկայել է Բուզանդը: Հոմանիշների կողք կողքի գործածութիւնը, լեզուաճանաչական իւրայատկութիւնից զատ, նաեւ երկլեզուային, երբեմն՝ եռլեզուային բառարանի բառայօդուածների նմոյշ է:

8 Ն. Աղոնց, Հայաստանը Յուստինիանոսի դարաշրջանում, Երեւան, 1987, էջ 54: Ostigan (ostikan)-ը միջին պարսկերէնում ունի «Ռատարիմ, վատաբեյի» իմաստը (տե՛ս Mackenzi, 61), «Ռիմ Ռայոց մօտ Ռատարիմ էիմ կոչումը թագաւորի մօտիկ բարձրագոյն պաշտօնեաները» (տե՛ս Արմ, Ոստիկան բառայօդուածը):

### ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԷՆԻ ԲԱՌԱՐԱՆԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

Սոհամադ Սալէք Սոհամադի

Հ. Մ. Ամալեանը Հայ բառարանագրութեան պատմութիւնը բաժանել է 3 հիմնական շրջանների<sup>1</sup>. Միջնադարեան շրջան (սկզբից մինչեւ ժէ. դարի 2-րդ քառորդ՝ Ռիփոլայի բառարանի երեւան գալը)<sup>2</sup>, 2. Նոր շրջան կամ նախասովետական շրջան (ժէ. դարի 2-րդ քառորդից մինչեւ մեր դարի 20-ական թուականները) եւ 3. Հայ բառարանագրութեան սովետական շրջան:

Հայ նոր բառարանագրութեան շրջանում ստեղծւում են Հայ բանասիրութեան գլուխգործոցներ՝ Նոր Հայկագեան, Արմատական ու Մալխասեանցի բառարանները:

Ժէ.-ի. դարերի Հայ բառարանագրութիւնը հարուստ պատմութիւն ունի: Բացի մատենակից բառարաններից, երկրագնդի 45 Հայագիտական եւ Հայաշատ բնակավայրերում 280-ից աւելի Հայագէտներ հրատարակել են 320 բառարան<sup>3</sup>: Կ. Պոլիսը մեծ աւանդ է ունեցել Հայ բառարանագրութեան ասպարէզում: Հայերէն առաջին տպագիր բառարանը՝ Dictionarium Armeno-Latinum-ը, կազմուել է Ֆ. Ռիփոլայի կողմից եւ հրատարակուել է 1621 թ. Միլանում, իսկ 1633 թ. վերահրատարակուել Փարիզում:

Ժէ. դարի Երեմիա Մեղրեցու «Բառգիրք Հայոց»<sup>4</sup> աշխատութիւնը, որը հրատարակուել է 1698 թ. Ալիկոննիայում (Իտալիա), ապա Կոստանդնուպոլսում, Հայ բառարանագրութեան սկզբնաղբիւր հանդիսացող էլ առաջին տպագիր Հայերէն բացատրական բառարանն է, որը զգալի դեր է խաղացել Հայ բառարանագրութեան բնագաւառում: Այս բառարանից օգտուել են միջին Հայերէնի բառապաշարին նուիրուած բառարանների հեղինակները, ինչպէս, օրինակ, Նորայր Բիւզանդացին, Հր. Աճառեանը, Գ. Զահուկեանը<sup>5</sup>:

1749 թ. հրատարակուել է Հայ բառարանագրութեան Հայր՝ Վենետիկի Մխիթարեան Միաբանութեան Հիմնադիր Մխիթար Սեբաստացու «Բառգիրք Հայկագեան լեզուի» բառարանի առաջին հատորը՝ նոր գիտական մօտեցումներով:

Ինչ վերաբերում է միջին Հայերէնի (ժԲ.-ժԶ. դդ.) բազմոլորտ թարգմանական եւ հեղինակային մատենագրութեան բառապաշարին նուիրուած բառարաններին, ապա պէտք է նշել, որ միջին Հայերէնի բառապաշարի զգալի մասն առ այսօր անտիպ մատենագրութեան եւ միջին Հայերէնի չհրատարակուած բառարանների պատճառով դուրս է մնացել բանասիրական եւ ստուգաբանական ուսումնասիրութիւնների տեսագաւառից:

1 Հ. Մ. Ամալեան, Միջնադարեան Հայաստանի բառարանագրական յուշարձանները (V-XV դդ.), Երեւան, 1966:  
2 Միւնչեւ ԺԷ. դար հայ բառարանագրութիւնը սահմանափակում էր փոքրածաւալ բառացանկերով եւ բառարաններով, որոնք բաւարարել են ժամանակաշրջանի պահանջները:  
3 Ս. Անթոյեան, Գ. Գասպարեան, Հայ բառարանագրութեան պատմութիւն, Երեւան, 1968 /Գրախօսութիւն/, - ՊԲՀ, 1989, էջ 267:

4 Երեմիա Մեղրեցի, Բառգիրք հայոց, Ա տպ., Ալիկոննա, 1698, Բ տպ., 1729:  
5 Այս կապակցութեամբ մանրամասն տե՛ս՝ Ռ. Ղազարեան, Լեզուաբանական ուսումնասիրութիւններ, Երեւան, 2010. Ն. Ակիմեան, Հայերէն արմատական բառարան, - «Հանդէս ամսօրեայ», 1930, էջ 491. Հ. Մ. Ամալեան, Գ2. աշխ:

Ինչպէս յայտնի է, միջին հայերէնը, որի հիմնական առանձնայատկութիւններն ուրուագծուել են Ժ. դարից, տարբերուել է գրաբարից իր հնչիւնական, քերականական համակարգով եւ բառապաշարի հիմնական դրսեւորումներով<sup>6</sup>:

Պէտք է նկատել, որ մինչեւ այսօր հայերէնագիտական ուսումնասիրութիւնների համեմատաբար գերակշռող մասը նուիրուած է հին եւ նոր հայերէնին<sup>7</sup>, իսկ միջին հայերէնի եւ յատկապէս՝ յարակից լեզուներից կատարուած փոխառութիւնների հարցը պատշաճ ուսումնասիրութեան ենթարկուած է: Հիմնական պատճառը, հաւանաբար, միջին հայերէնի շրջանին պատկանող բոլոր ձեւագրերի հրատարակուած չլինելն է եղել: Հարցը կարեւորուած է այն տեսանկիւնից, որ միջին դարերում հայ-իրանական, հայ-արաբական մշակութային, գրական, գիտական, քաղաքական եւ տնտեսական յարաբերութիւնները զարգացել են, եւ, բնականաբար, ընդլայնուել են լեզուական փոխազդեցութիւնները:

Վաստակաշատ Հր. Աճառեանի ջանքերով կազմուել է արժէքաւոր Հայերէն արմատական բառարանը<sup>8</sup>, որտեղ ներկայացուած են հիմնականում հին հայերէնի

<sup>6</sup> Միջին հայերէնի մասին տե՛ս Ա. Այտրնեան, *Քննական քերականութիւն արդի հայերէն լեզուի*, 1866, էջ 142-146. Ս. Ղազարեան, *Միջին հայերէն*, Եր., 1960: *Ակնարկներ միջին հայերէնի պատմութեան*, հտ. Ա., Հր. Աճառեանի անուան լեզուի ինստիտուտ, Եր., 1972. *Ակնարկներ միջին հայերէնի պատմութեան*, հտ. Բ., Հր. Աճառեանի անուան լեզուի ինստիտուտ, Եր., 1975. Ռ. Ղազարեան, Հ. Մ. Աւետիսեան, *Միջին հայերէնի բառարան*, Երեւան, 2009. Ս. Ղազարեան, *Միջին հայերէն*, գիրք Ա., Երեւան, 1960. J. Karst, *Historische Grammatik des Kilikisch-Armenischen*, Strassburg, 1901.

<sup>7</sup> Հայերէնի իրանական փոխառութիւնների մասին տե՛ս Լ. Ծ. Յովհաննիսեան, *Հայերէնի իրանական փոխառութիւնները*, Երեւան, 1990. Առյճի Հայ-իրանական նոր ստուգաբանութիւններ, Երեւան, 2005:

<sup>8</sup> Հ. Աճառեան, *Հայերէն արմատական բառարան*, հտ. Ա., Երեւան, 1971, էջ 7:

բառապաշարի ստուգաբանութիւնները: Հայոց լեզուի մատենագրութիւնը բաժանելով հինգ շրջանի (սկեդարեան շրջան, յետսկեդարեան կամ յետին հայերէնի շրջան, ստորին կամ միջին հայերէնի շրջան, դաւառական հայերէն, նոր կամ աշխարհաբար հայերէնի շրջան), նա նշում է, որ յիշեալ հինգ շրջաններից առաջին երկուսի բառերն են միայն ընդգրկուած Հայերէն արմատական բառարանում եւ յստակեցնում է, որ ստորին հայերէնի բառարան բնաւ չկայ, իսկ դաւառական հայերէնի համար հրատարակուած են Սահակ վրդ. Ամատանու «Հայոց բառ ու բանը» (Վաղարշապատ, 1912), եւ իր (Աճառեանի) «Գաւառական բառարանը»<sup>9</sup>:

Միջին հայերէնի համեմատաբար ամբողջական բառապաշարին նուիրուած հիմնական արժէքաւոր բառարաններն են.

Նորայր Բիւզանդացի, «Բառագիրք ստորին հայերէնի ի մատենագրութեանց ԺԱ-ԺԷ դարուց»:

J. Karst, WÖRTERBUCH DES MITTELARMENISCHEN անտիպ բառարանը, 1940-1942 թթ.:

Ռ. Ղազարեան, Հ. Աւետիսեան, «Միջին հայերէնի բառարան»:

Ժամանակագրական առումով միջին հայերէնի բառապաշարին նուիրուած առաջին բառարան կարելի է համարել Նորայր Բիւզանդացու «Բառագիրք ստորին հայերէնին», որն աւարտել է 1885 թ., իսկ հրատարակուել է 2000 թ.: Թէեւ «կոթողային եզակի երեւոյթ բացատրական ստուգաբանական բնոյթի Նոր հայկազեան բառարանում»<sup>10</sup> գրեթէ սպառնիչ կերպով ներկայացուած է հին գրական հայերէնի (գրաբարի) բառապաշարը եւ բազմակող-

<sup>9</sup> Հ. Աճառեան, *Հայերէն գաւառական բառարան*, Էմիսեան Ազգագրական ժողովածո հրատարակութեամբ Լազարեան ճեմարանի Արեւելեան լեզուաց., հտ. Թ, Թիֆլիս, 1913:

<sup>10</sup> Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հտ. Ա., Բ. Վեներտիկ, 1836-1837:

մանիօրէն ենթարկուած բառարանագրական մշակման: Այս բառարանում առաջին անգամ բուն միջինհայերէնեան մի ամբողջ շարք բառեր որոշակիօրէն սահմանազատուած են գրաբարի բառերից՝ Ռմկ. (Ռամկօրէն) նշումով»<sup>11</sup>:

Յ. Կարստի *Wörterbuch des Mittelarmenischen*-ը առ այսօր անտիպ է մնում: Սակայն ներկայումս *VW*-ի<sup>12</sup> հովանաւորութեամբ աշխատանքներ են տարւում այս արժէքաւոր բառարանի հրատարակման ուղղութեամբ:

Ռ. Ղազարեանի եւ Հ. Աւետիսեանի «Միջին հայերէնի բառարանը» նախ հրատարակուել է առանձին հատորներով՝ Ա (1987 թ.) եւ Բ (1992 թ.), ապա 2009 թ. վերահրատարակուել է մէկ հատորով:

Անդրադառնանք վերոյիշեալ բառարանների կառուցուածքի բնութագրմանը եւ որոշ առանձնայատկութիւններին:

Նորայր Բիւզանդացի, Բառագիրք ստորին հայերէնի (ի մատենագրութեանց ԺԱ-ԺԷ դարուց)

Միջին հայերէնի բազմոլորտ մատենագրութեան բառապաշարն առաջին անգամ ամփոփուում է մեծանուն հայագէտ Ն. Բիւզանդացու (1845-1915) «Բառագիրք ստորին հայերէնի ի մատենագրութեանց ԺԱ-ԺԷ դարուց» արժէքաւոր աշխատութիւնում: Նա միջին հայերէնի բառամթերքի մասին գրում է. «Երկհատոր Հայկազեան բառարանի ստուգաբանութեամբ ստորին հայերէնի ալ բառարան մը կրնայ կազմուիլ, այնչափ ճոխ է այս լեզուն բառերու, ոճերու, ձեւերու եւ ասացուածոց մասամբ»<sup>13</sup>: Աշխատութեան ձեւագիրը պահուում է Շուէդիայի Գեթթեբուրգ քաղաքի

<sup>11</sup> Ռ. Ղազարեան, Գշ. աշխ., էջ 211:  
<sup>12</sup> Volkswagenstiftung, Between Europe and the Orient – A Focus on Research and Higher Education in/on Central Asia and the Caucasus. (<http://titus.unifrankfurt.de/curric/konfbil/readercpl.pdf>)  
<sup>13</sup> Ն. Բիւզանդացի, տե՛ս «Փորձ», 1879, 7-8, էջ 247:

համալսարանի կենտրոնական գրադարանի ձեռագրերի բաժնում<sup>14</sup>: Ձեռագիրը բաղկացած է հինգ հատորից: Ըստ հեղինակի նշումների՝ 4-րդ հատորը աւարտել է 1885 թ. նոյեմբերի 23-ին, իսկ 5-րդ հատորը, որն ընդգրկել է պլետք բառից մինչեւ ֆ տառը, անմշակ վիճակում է գտնուում: Բառարանում գլխաբառից յետոյ տրւում են հոլովական եւ խոնարհման ձեւերը, նշուում է քերականական կարգը, այնուհետեւ, եթէ բառը փոխառուած է, տրւում է օտար աղբիւրը, երբեմն բառի ստուգաբանութիւնը, ինչը ստուգաբանական արժէք է տալիս բառարանին: Ապա բացատրուում է բառը, բերում են վկայութիւններ միջնադարեան հայ մատենագրութիւնից՝ բառի իւրաքանչիւր իմաստը եւ իմաստային նրբերանգը հաստատելու համար<sup>15</sup>:

2000 թ. Մարտիրոս Մինասեանի ջանքերով միջին հայերէնի բառապաշարին նուիրուած սոյն արժէքաւոր բառարանը հրատարակուում է սակաւաթիւ տպաքանակով: Այն ընդգրկում է ԺԱ-ԺԷ դարերի մատենագրութեան մէջ վկայուած հայերէն կամ հայերէնացած բառերը: Ձեռագրի վերոյիշեալ 5-րդ հատորը եւս Մ. Մինասեանի մշակմամբ յաւելուել է բառարանին: Բառարանն ունի «Անուանք մատենագրաց եւ մատենագրութեանց յիշատակելոց ի բառարանիս» ցանկը, որտեղ աստղանիշներով առանձնացուել է մինչեւ հեղինակի ապրած ժամանակաշրջանը տպագրուած գրականութիւնը, ինչպէս նաեւ յաւելուած՝ «Ցուցակ մատենագրութեանց եւ թարգմանութեանց ԺԲ-ԺԷ դարուց», որը յայտնաբերել է Մ. Մինասեանը հեղինակի անտիպ գործերում:

Նորայր Բիւզանդացու «Բառագիրք ստորին հայերէնի ի մատենագրութեանց

<sup>14</sup> Տե՛ս Նորայր Բիւզանդացու դիւանի Գիտերի ցանկ, «Բազմավէպ», 1983, 1-4, էջ 221-222, թիւ 673-676:  
<sup>15</sup> Ռ. Ղազարեան, Գշ. աշխ., էջ 99:

ժԱ-ժԷ դարուց»-ը համարում է Նոր Հայկազեան բառարանի օրգանական շարունակությունը: Բիւզանդացին «նոյնիսկ յաճախ դուրս է եկել սովորական բառարանի սահմաններից եւ իւրաքանչիւր բառայօգուածը կազմելիս տուել է ինչպէս բառի բացատրությունը, նոյնպէս եւ երբեմն բառի ստուգաբանությունը, սխալ գրչութիւնները, բարբառային ձեւերը եւ այլն: Սակայն ոչ բոլոր բառերն են բացատրուած կամ վկայութիւններով հաստատուած, յամենայն դէպս այն, ինչ որ կարելի է, կամ պատասխանել է Բիւզանդացին, հայագիտութեան համար մեծ արժէք ունի»<sup>16</sup>:

Ն. Բիւզանդացին իր բառարանում վերլուծութեան է ենթարկում «հայ մատենագիրների երկերում գրիչների կողմից մտցուած փոխառությունները, ուղղում նրանց կատարած սխալները, վերականգնում բազմաթիւ տեքստեր եւ ամէնից գլխաւորը, կազմում միջին հայերէնի բառարանը, որը յայտնաբերուել է 1945 թուականին»<sup>17</sup>:

Այս ամէնը վկայում է հարուստ գրականութեան մասին, որն իր ձեռքի տակ է ունեցել Նորայր Բիւզանդացին:

Պէտք է նշել, որ Նորայր Բիւզանդացին իր «Բառագիրք ի գաղղիերէն լեզուէ ի հայերէն»<sup>18</sup> արժէքաւոր աշխատանքում նոյնպէս լայնօրէն անդրադարձել է միջին հայերէնի բառապաշարին: Նա սոյն բառարանի առաջաբանում գրում է. «Ուր ուրեք լուէին դպրութիւնք ոսկի եւ արծաթի դարուց (Ե-ԺԲ), ոչ ինչ խղճեցի առնուլ ընտրանաւ բառս եւ ի մատենագրաց խոնարհագոյն դարուց (ԺԳ-ԺԷ), եւ առ որոշելոյ զայնոսիկ ի բուն ի հնոցն՝ նշանակե-

ցի առընթեր դգլխագիրն՝ Ս., իբր Ստորին հայերէն»<sup>19</sup>:

**Յ. Կարստ, Wörterbuch des Mittelarmenischen, անտիպ բառարան**<sup>20</sup>

Գերմանացի լեզուաբան, հայագէտ Յոզեֆ Կարստը (1871-1962 թթ.)՝ Հ. Հիւբշմանի աշակերտը, իր ուսումը ստացել է Ստրասբուրգի Վիլհելմ կայսեր անուան համալսարանում, որտեղ ուսումնասիրել է հնդկական բանասիրություն, պարսկերէն, ասորերէն, արաբերէն եւ հայերէն: 1899 թ. պաշտպանել է «Կիլիկեան հայերէնի արտասանությունն ու ձայնաւորները» թեմայով դոկտորական ատենախօսություն<sup>21</sup> եւ դասաւանդել նոյն համալսարանում: Վաստակաշատ հայագէտը հեղինակել է մի շարք արժէքաւոր աշխատություններ. ինչպէս, օրինակ, Ժ. դարի հայ պատմիչ Ստեփանոս Ասողկի «Տիեզերական պատմութեան» գերմաներէն թարգմանությունը, «Հայ բանասիրութեան պատմությունը» (Geschichte der armenischen Philologie, Heidelberg, 1930), «Հայ-կովկասեան եւ հեթիթա-ասիական առասպելաբանությունը» (Mythologie armeno-caucasienne et hetitö-asianique, Zurich, 1948), Դ. դարի յոյն հեղինակ, «Եկեղեցական պատմութեան հայր» մականուամբ Եւսեբիոս Կեսարացու «Քրոնիկոնի»<sup>22</sup> գերմաներէն թարգմանու-

<sup>19</sup> Նոյն տեղում, առաջաբանը:  
<sup>20</sup> Կարստի «Միջին հայերէնի բառարանի» վրա աշխատել ենք 2010-2014 թթ. Երեւանի Մ. Մաշտոցի անուան Մատենադարանում:  
<sup>21</sup> J. Karst, *Aussprache und Vocalismus des Kilikisch-Armenischen*, 1901, Strassburg.  
<sup>22</sup> «Eusebius' Chronicle was written in about 325 A.D. It contained Chronological Tables from the earliest times down to the reign of the emperor Constantine. These tables were widely copied, and are best known through the Latin translation of St. Jerome. Eusebius also published the evidence for some of the dates in the tables, mostly in the form of excerpts from earlier writers. Most of the original Greek text of the Chronicle has been lost. This translation is based on a Latin translation of the

<sup>16</sup> Նոյն տեղում, էջ 100:  
<sup>17</sup> Նոյն տեղում, էջ 96:  
<sup>18</sup> Ն. Բիւզանդացի, *Բառագիրք ի գաղղիերէն լեզուէ ի հայերէն*, Կոստանդնուպոլիս, 1884:

թիւնը եւ այլն: Հայ լեզուաբանութեան պատմութեան մէջ առաջին անգամ Յ. Կարստը միջին հայերէնը ուսումնասիրութեան առանձին առարկայ է դարձրել: Նրա «Միջին հայերէնի բառարանը» բացառիկ գիտական արժէք է ներկայացնում:

Յ. Կարստը իր 90-ամեայ կեանքի 70 տարիները նուիրել է հայագիտութեանը<sup>23</sup>, իսկ իր «Միջին հայերէնի բառարանի» վրայ աշխատել է մօտ 30 տարի:

Հայագիտական, բասկագիտական (Basque language) եւ կովկասագիտական ուսումնասիրությունները Կարստի գիտատեղծագործական հիմնական ուղիներն են համարում: Կարստը նաեւ իր ուրոյն աւանդն է ունեցել ազգագրութեան, համեմատական ղիցաբանութեան, իրաւագիտութեան, դրամագիտութեան, մարդաբանութեան եւ գրականագիտութեան ոլորտում<sup>24</sup>:

Կարստի «Միջին հայերէնի բառարանը» ներառում է նախաբան, օգտագործած գրականութեան ցանկ, գրականութեան պատմություն եւ բացատրություններ բառարանի կառուցուածքի մասին:

Armenian translation of the Greek original, in the Schoene-Petermann edition. However it is not intended to be a literal translation of the Armenian text. For instance, it attempts to make use of the Greek text, where evidence for it exists, especially in the spelling of proper names, which may be hard to recognise in their Armenian form. The Armenian text was translated very accurately into German by Josef Karst. (Available at: <http://www.attalus.org/translate/eusebius.html>)  
<sup>23</sup> Կարստի մասին մանրամասն տե՛ս Հ.Յ.Տ., Կիլիկեան հայերէնը. «Համդէս ամսօրեայ», 1900, ԺԴ. տարի, Յունուար, էջ 17-20. Գ. Վ. Աբգաբեան, *Յոզեֆ Կարստի անտիպ «Միջին հայերէնի բառարանը»*.- Բանբեր Երեւանի համալսարանի, 1995, 2 /86/, էջ 183-186. Ա. Ռ. Գազիբեան, *Յոզեֆ Կարստի լեզուաբանական հետազոտությունները*, Երեւան, 2008. Հ. Զ. Պետրոսեան, *Հայերէնագիտական բառարան*, Երեւան, 1987:  
<sup>24</sup> Ա. Ռ. Գազիբեան, նշ. աշխ., էջ 9-10:

Իրականում Կարստի բառարանը միջին հայերէնի պատմական-ժազուամաբանական բառարան է, որտեղ յատուկ ուշադրություն է դարձուել միջին հայերէնում օգտագործուած բոյանունների եւ դեղանունների ծագումնաբանությունները, ներկայացուել է դրանց ծագումը արաբերէնում, պարսկերէնում, վրացերէնում, յունարէնում, լատիներէնում եւ այլ լեզուներում: Բառարանում Կարստը հիմնականում ներկայացնում է բառերի զուգահեռները հնդեւրոպական եւ ոչ հնդեւրոպական լեզուներում:

Իր «Միջին հայերէնի բառարանի» ստեղծման նպատակի մասին Կարստը գրում է. «Այն առաջին հերթին կոչուած է ստեղծելու ճիշտ հիմք հայոց լեզուի բնագաւառում լեզուահամեմատական յաջող աշխատանքի համար, որքանով այստեղ առաջին անգամ ի մի է բերուել, ըստ բարբառների տարբերակում եւ համեմատում է միջին շրջանի ամբողջ բառամթերքը, ինչպէս նաեւ փորձ է արւում այն յանգեցնել հին հայերէնի հասանելի համարժէքներին, այլեւ հասցնել մինչեւ նոր հայերէնի բարբառներին, իբրեւ անհրաժեշտ նախնական աշխատանք հայոց լեզուի պատմական քերականութեան համար»<sup>25</sup>:

**Կարստի Wörterbuch des Mittelarmenischen անտիպ բառարանի ընդհանուր բնութագրութիւն**

Յ. Կարստի այս բացառիկ աշխատանքը, որը ներկայումս գտնւում է Մատենադարանի Կարստի անուան արխիւի *Heritage of Josef Karst* 249,250, 251, 252, 253 եւ 254 թղթապանակներում՝ թուով 38 վաւերագրերի մէջ, ընդգրկում է 7417 թուղթ:

Այս ծաւալուն բառարանի բառերը եւ նիւթերը հաւաքուել են երկար տարիների

<sup>25</sup> J. Karst, *Geschichte der armenischen Philologie*, Heidelberg, 1930, 43-44. Ա. Ռ. Գազիբեան, նշ. աշխ., էջ 83:

ընթացքում, գրուած են հիմնականում փոքրիկ թերթիկների վրայ, որոնք փակ-ցուած են մեծ թերթիկներին<sup>26</sup>:

Յ. Կարստը գիտալեզուաբանական մօտեցմամբ ներկայացնում է ընդարձակ մի աշխատանք, որը «ունենալով ստուգաբանական բնոյթ եւ նիւթի լայն ընդգրկում, հետապնդում է փոքր-ինչ այլ նպատակ, քան զուտ միջին հայերէնի բառամթերքը ներկայացնելն է»<sup>27</sup>:

Միջին հայերէնի բառապաշարին նուիրուած սակաւաթիւ բառարանների համեմատ, Կարստի բառարանի առաւելութիւններից են բառարանի ծաւալը<sup>28</sup>, ծագումնաբանական-լեզուաբանական վերլուծութիւնները եւ սկզբնաղբիւրների յիշատակումները, տեքստային օրինակները եւ հեղինակային վկայութիւնները: Վերջինս կարեւոր է բառիմաստի ճշգրիտ յայտնաբերման համար: Սակայն պէտք է նշել, որ սոյն բառարանում բազմաթիւ բառեր չունեն հեղինակային վկայութիւններ, եւ չի նշուած աղբիւրը:

1962 թ. Գիւլբենկեանների միջոցով վերոյիշեալ անտիպ բառարանը Փարիզից ուղարկուած է Երեւանի Մ. Մաշտոցի անունի Մատենադարան, որտեղ պահուած է առ այսօր:

Յատկանշական է, որ Կարստը 1956 թ. առաջ դիմել է Մխիթարեաններին իր «Միջին հայերէնի բառարանը» տպագրելու համար: Յետագայ տարիների ընթացքում բառարանն ուղարկուել է Վիեննա, որտեղ տպագրուել են միայն տիտղոսաթերթն ու բառարանի՝ բառացանկի առաջին երկու էջերը՝ Ա տառով սկսուող, երկու սիւնակով:

Բառարանի տպագրուած տիտղոսաթերթն է՝

26 Մատենադարանում պահուող Կարստի արխիււ աւտագիպի է ենթարկել Ա. Ադամեանը 1963 թ.:

27 Ա. Ռ. Գազիմեան, ԳՁ. աշխ., էջ 87:

28 Տե՛ս Գ. Վ. Աբգարեան, ԳՁ. աշխ., էջ 183-186:

WÖRTERBUCH DES MITTELARMENISCHEN HISTORISCH-ETYMOLOGISCH AUF GRUND DER ALTEN SPRACHE UND UNTER BERÜCKSICHTIGUNG DER NEUARME-NISCHEN DIALEKTE BEARBEITET VON J. KARST

Ձեռագրի 8-րդ էջի վրայ Կարստի ձեռագրով գրուած է՝

J. Karst

Dictionnaire Arménien-Médiéval ou Lexique historique-étymologique de la Basse-Arménicité Wörterbuch des Mittelarmenischen.

Ձեռագրի 24-րդ էջի ներքեւի մասում մատիտով գրուած է՝ J. Karst Strasbourg 1940-1942:

**Կարստի Wörterbuch des Mittelarmenischen աճտիպ բառարանի սկզբնաղբիւրները եւ մատենագրութիւնը**

Բառարանի առաջաբանում մանրամասն տեղեկութիւններ են հաղորդուած բառարանը կազմելու հանգամանքների վերաբերեալ: Էջ 25-ը սկսուած է INTRODUCTION վերնագրով, որտեղ գերմաներէնով համառօտ տալիս է թեմային վերաբերող գրականութեան ցանկը եւ սկզբնաղբիւրների համառօտ պատմութիւնը: Ձեռագրի նախաբանում (էջ 33) նշուած է Ժ. դարի «Պատմութիւն Պղնձէ քաղաքի» զրոյցի հայերէն թարգմանութեան վերնագիրը<sup>29</sup>, ինչն ապացուցում է հեղինակի մանրակրկիտ ուսումնասիրութիւնները

29 Այս աշխատանքի մասին մանրամասն տե՛ս Պ. Մուրադեան, «Պատմութիւն Պղնձէ քաղաքի» զրոյցի հայկական եւ վրացական պատումների ու նրանց փոխարարութեան շուրջ», «Բանբեր Մատենադարանի», 1962, թիւ 6, էջ 249. Russel R. James, *The Tale of the Bronze City in Armenian. Armenian and Iranian Studies*, Harvard Armenian Texts and Studies, 9, 2004, 250-261. Մալէք Մոհամմադի Մ., 10-րդ դ. «Պատմութիւն Պղնձէ քաղաքի» բնագրի փոխառեալ բառապաշարի շուրջ», «Լրաբեր հասարակական գիտութիւնների», 2011, թիւ 3, էջ 207-220:

միջինհայերէնեան մատենագրութեան ուղորտում:

Ձեռագրի 38-րդ էջում *Medizinal-pharmazeutische literatur* վերնագրի ներքոյ ներկայացուած է բժշկագիտութեան ոլորտի միջինհայերէնեան մատենագրութեան ցանկը, իսկ 39-րդ էջում *Mittelarmenische Glossare* վերնագրի տակ յիշատակուած է.

ա) *Medizinalwörterbuch*, որտեղ ներկայացուած է հետեւեալ մատենագրութիւնը՝ «Թարգմանութիւն անուանցն դեղոց յայլ լեզուաց ի մերն-?», «Անուանք դեղերոյ. հայերէն եւ յարապկերէնն. եւ լաղին բառով», «Բառք Գաղիանոսի» եւ այլն:

Իսկ բ) հատուածում՝ *Glossare Grammatik Dichterischer*-ում, ներկայացուած է հետեւեալ մատենագրութիւնը.

«Մեկնութիւն բառից քերականի: Վերծանութիւն: Ընթերցողութիւն»:

«Այս բառք են քերթողականք... եւ են, որ դեղջուկք են, որով ճարտասանքն վարին, զի յաճախապէս փոխաբերին սակս զարդու ճարտասանից եւ հարկէ յոքնայամար եղանիլ»:

Յիշատակուած է նաեւ «Հանդէս բանաստեղծաց փաղանունաբար ստորոգիլ նորավարժիցն սակս: Բառ է գեղջուկ», «Թարգմանութիւն պարսիկ բառի ի վարդան գրոց», «Բառք խորանին» եւ այլն:

Էջ 45-ում ներկայացուած է կրօնական եւ աստուածաբանական մատենագրութիւնը՝ *Religiös-kirchliche Vulgarprosa, Theologische Traktate, kanonische*, իսկ 55-62-րդ էջերում՝ օգտագործուած նշանների եւ համառօտագրութիւնների ցանկը:

64-73-րդ էջերում օգտագործուած գրականութեան ցանկն է (*Original-Quellen literatur und Epigraphik*)՝ միջինհայերէնեան մատենագրութեան ձեռագիր եւ տպագիր 84 աշխատանքների տուեալները:

Կարստն օգտագործել է իր թեմային առնչուող համարեա բոլոր հետազօտութիւնները:

Բացի տպագիր գրականութիւնից, Կարստը օգտագործել է նաեւ բազմաթիւ ձեռագրեր, որոնք պահուած էին Վենետիկում եւ տարբեր վանքերում ու եկեղեցիներում: Նա ուսումնասիրել է միջնադարեան բժշկարանները եւ դատաստանագրքերը, ինչպէս, օրինակ, Սմբատ Սպարապետի եւ Մխիթար Գօշի դատաստանագրքերը Յ. Կարստը ներկայացնում է հետաքրքիր հնչիւնաբանական եւ ձեւաբանական վերլուծութիւններ ու մանրամասնութիւններ գրաբարի, միջին հայերէնի, պարսկերէնի, արաբերէնի, վրացերէնի, մեգրելերէնի եւ ասորերէնի վերաբերեալ, ինչը վկայում է, որ նա տիրապետել է այդ լեզուներին: Աւելին, ստուգաբանութիւններ կատարելիս բառերը գրել է պարսկերէն, արաբերէն, վրացերէն տառերով: Ի դէպ, Կարստը, տիրապետելով հին լեզուներին, ինչպիսիք են հին պարսկերէնը, յունարէնը, լատիներէնը եւ հին ֆրանսերէնը, ներկայացնում է այդ լեզուներին պատկանող փոխառութիւնների ծագումնաբանութիւնը:

Բառացանկի կառուցումը: Բառարանում գլխաբառերը տրուած են հայերէնով, այբբենական կարգով, բառը տառադարձուած է, ապա տրուած է տուեալ բառի գերմաներէն, որոշ դէպքերում՝ ֆրանսերէն թարգմանութիւնը: Յիշատակուած են բառերի գրչագրական տարբերակները կամ բառի բարբառային տարբերակները:

Բառերի գերակշռող մասի համար ներկայացուած են գրաւոր աղբիւրներում հանդիպող վկայութիւնները, ապա նշուած է դրանց ծագումը՝ ստուգաբանական վերլուծութիւններով:

Պէտք է նշել, որ Կարստը ստուգաբանութիւնների մի զգալի մասի համար յղում է կատարում Հր. Աճառեանի Հայերէն արմատական բառարանին՝ *Hr. Ajar. A. WWb.* Համառօտագրութեամբ, յիշատակելով հատորը եւ էջը:

**Ռ. Ղազարեան, Հ. Աւետիսեան, Միջին հայերէնի բառարան**

Ռ. Ղազարեանի եւ Հ. Աւետիսեանի «Միջին հայերէնի բառարանը» միջին հայերէնի բառապաշարին նուիրուած բառարաններից առաջինն է հրատարակուել: Ա հատորը՝ 1987 թ., Բ հատորը՝ 1992 թ., իսկ 2009 թ. այն վերահրատարակուել է մէկ հատորով: Բառարանն ընդգրկում է ԺԲ-ԺԶ դարերի ինքնուրոյն եւ թարգմանական երկերում վկայուած միջին գրական հայերէնի բառերը, ոճերն ու դարձուածքները, որոնք ձեւիմաստային առումով բնորոշ չեն գրաբարին եւ ընդհանրապէս չեն հանդիպում Ե.-ԺԱ. դարերի մատենագրութեան մէջ: Բառարանի բաժինները հետեւեալն են՝ բառարանի կառուցուածք, սկզբնաղբիւրներ եւ դրանց համառոտագրութիւններ, որտեղ արւում է 195 աղբիւրների ցուցակը, համառոտագրութիւններ եւ բուն բառարան (էջ 13-834): Գրքի վերջում ներկայացւում է օգտագործուած բառարանների ցանկը (էջ 835):

Բառարանը կազմելիս հեղինակներն օգտուել են համապատասխան մատենագրական գրականութիւնից՝ միջինհայերէնեան մատենագիրների տպագիր ու անտիպ աշխատանքներից, տարբեր բովանդակութեան ձեռագրերից եւ բնագրերից: Պէտք է նշել, որ Ռ. Ս. Ղազարեանը եւ Հ. Մ. Աւետիսեանը Միջին հայերէնի բառարանը կազմելիս օգտուել են նաեւ Կարստի անտիպ աշխատութիւնից: Ներկայացուած են միջինհայերէնեան շրջանին վերաբերող բառերը եւ դրանց հայերէն բացատրութիւնները, որոշ դէպքերում յիշատակուում են փոխառութիւնների արմատները:

Իւ. Վարդանեանը եւ Ն. Մկրտչեանը Ռ. Ս. Ղազարեանի եւ Հ. Մ. Աւետիսեանի բառարանի մասին իրենց գրախօսականներում<sup>30</sup> բաւականին կարեւոր համարելով

<sup>30</sup> Իւ. Վարդանեան, Ռ. Ս. Ղազարեան, ԱԶ. աշխ., էջ 207-213:

բառարանը՝ ներկայացնում են որոշ դիտարկումներ եւ գալիս հետեւեալ եզրայանգման. բառարանի բառազանձը քաղուած է շուրջ 200 միջնագրեան երկերից եւ ընդգրկում է շուրջ 23,000 բառի բացատրութիւն: Միջինհայերէնեան հսկայածաւալ մատենագրութիւնում առկայ զգալի քանակութեամբ բառեր դուրս են մնացել բառարանից: Առ այսօր միջին հայերէնեան շրջանին վերաբերող բազմաթիւ ձեռագրեր են հրատարակուել, որոնց բառապաշարը չի ընդգրկուել բառարանում<sup>31</sup>: «Բառարանը ամբողջութեամբ չի ներկայացնում նաեւ իր օգտագործած աղբիւրների բառամթերքը. օրինակ՝ «Մանր ժամանակագրութիւնների» զոյգ հատորների մէջ հրատարակուած բնագրերի ունեցած տասնեակ փոխառեալ բառեր չեն քաղուել», դուրս են մնացել նաեւ Ֆրիկի, Յովասափ Սեբաստացու եւ Յովհաննէս Թլիւրանցու երկերի շատ բառեր<sup>32</sup>:

Ռ. Ս. Ղազարեանի եւ Հ. Աւետիսեանի բառարանում միւս բառարանների, յատկապէս՝ Ն. Բիւզանդացու բառարանի համեմատ աւելի շատ են փոխառութիւնները: Բառարանում նախ ներկայացւում են բառերի բուն իմաստները, ապա պարզուում է իւրաքանչիւր բառի նախնական ձեւը փոխատու լեզուում:

Առանձնայատուկ տեղ են դրաւում փոխառեալ այն բառերը, որոնք հայերէնին են անցել թարգմանական գրականութեան միջոցով, այսինքն՝ գրական փոխառութիւնները:

<sup>31</sup> Ն. Ա. Մկրտչեան, ԱԶ. աշխ., էջ 195:  
<sup>32</sup> Աւելի մանրամասն տե՛ս Իւ. Վարդանեան, Ռ. Ս. Ղազարեան, ԱԶ. աշխ., էջ 211. «Թլիւրանցու» չեն վերցուել հետեւեալ բառերը. Ալվար (համաձայն, բաւարար, գոհ), Անախում, Անախում /անհաշիւ/, Խէրիաթ (բարիք). Կլափ (ծնօտ): Իսկ Ֆրիկի դիւանից չվերցուած բառերն աւելի շատ են, Ադիպաթ (վախճան, հետեւանք), Անշատափ (հանգիստ, խաղաղ)»:

Բառարանի գրախօսները արդարացիորէն արձանագրում են այն փաստը, որ միջինհայերէնեան մատենագրութեան ամբողջական բառամթերքը եւ փոխառեալ բառերն ամբողջութեամբ արձանագրուած չեն բառարանում: Այս կապակցութեամբ պէտք է նշել, որ բառարանի հեղինակների նպատակը, ամենայն հաւանականութեամբ, չի եղել միջին հայերէնի ամբողջական բառապաշարի ներկայացումը: Նրանց հիմնական նպատակը եղել է գործնական մի բառարանի ստեղծումը՝ լրացնելու համար ուսումնական եւ զիտահետազօտական բնագաւառներում առկայ բացը եւ պահանջը: Ինչ վերաբերում է փոխառեալ բառերին, ապա նշենք, որ սոյն բառարանում անդրադարձ կայ փոխառեալ բառապաշարին, սակայն հեղինակների հիմնական նպատակը միջին հայերէնի ստուգաբանական բառարան ստեղծելը չի եղել:

Յատկանշական է, որ ԺԸ. դարից սկսած հայ բառարանագիրները, ինչպէս, օրինակ, Նոր հայկազեան բառարանի հեղինակները, իրենց աշխատանքներում ներկայացնում էին նաեւ բառերի ստուգաբանութիւնները եւ տարբեր լեզուներից հայերէնում կատարուած փոխառութիւնները: Ակադ. Գ. Զահուկեանը այս կապակցութեամբ գրում է. «Հայ լեզուաբանութեան տրագիցիան դեռեւս XVIII դարում եւ XIX դարի սկզբներին՝ նախքան պատմահամեմատական մեթոդի արմատաւորումը, փորձեր է կատարել տարբերելու հայերէնի եւ այլ լեզուների միջեւ եղած ընդհանրութիւնների երկու տեսակ՝ փոխառութիւններ եւ այլ կարգի ընդհանրութիւններ»<sup>33</sup>: Հայոց լեզուի բառապաշարի ստուգաբանութեան ոլորտում արժէքաւոր դեր է խաղացել Նոր հայկազեան բառարանը:

<sup>33</sup> Գ. Զահուկեան, Հայոց լեզուի պատմահամեմատական քերականութեան հիմունքները, - ՀՍՍՌ. ԳԱ Տեղեկագիր հաս. գիտութիւնների, 1995, 1, էջ 62:

Ըստ Հր. Աճառեանի Հայերէն արմատական բառարանի տուեալների՝ աւելի քան 530 բառ առաջին անգամ ճիշտ կերպով ստուգաբանել են Նոր հայկազեան բառարանի հեղինակները:

**Ամփոփում**

Միջին հայերէնի բառապաշարին նուիրուած բառարանագրութիւնը համեմատաբար ուշ շրջանում է սկսուել: Առաջին անգամ հայ անուանի լեզուաբան Նորայր Բիւզանդացին է 1885 թ. կազմել միջին հայերէնի բառարան, որը հրատարակուել է 2000 թ.: Միջին հայերէնի բառապաշարին նուիրուած այլ բառարաններից են Յ. Կարստի Wörterbuch des Mittelarmenischen անտիպ բառարանը (1940-1942 թ.) եւ Ռ. Ղազարեանի ու Հ. Աւետիսեանի «Միջին հայերէնի բառարանը», որ նախ հրատարակուել է երկու հատորով՝ 1987 թ. եւ 1992 թ., ապա 2009 թ. վերահրատարակուել է մէկ հատորով:

Վերոյիշեալ երեք բառարանները, իրենց առաւելութիւններով եւ թերութիւններով հանդերձ, հեղինակների տքնաջան աշխատանքի շնորհիւ մեծ կարեւորութիւն են ունեցել հայ լեզուաբանութեան եւ միջին հայերէնի ուսումնասիրութեան գործում: Բառարանների հեղինակները միջին հայերէնի բառարան կազմելիս իւրայատուկ մօտեցմամբ, մեթոդով եւ նպատակով ստեղծել են միջին հայերէնի բառարան:

Յօդուածում անդրադառնում ենք վերոյիշեալ երեք բառարանների առանձնայատկութիւններին եւ կառուցուածքին, քննարկում ենք բառարանների վերաբերեալ գրախօսականների որոշ դիտարկումներ:

### Lexicographic Works on Medieval Armenian Language

Mohammad Malek Mohammadi (Ph.D)

Department of Armenian Language and Literature,  
University of Isfahan, IRI. E-mail: malekm\_m@yahoo.com

The lexicography devoted to the vocabulary of Middle Armenian originates relatively in late period. Armenian famous linguist Norayr Byuzandaci was the first who in 1958 writes the dictionary of Medieval Armenian, which is published in 2000. Other dictionaries devoted to the vocabulary of Medieval Armenian are the unpublished vocabulary of Y. Karst titled «Wörterbuch des Mittelarmenischen» /1940-1942/ and «The dictionary of Middle Armenian» by the authors of R. Ghazaryan and H. Avetisyan, which at first in 1978, and then in 1992 has been published in two volumes, then in 2009 has been republished in one volume.

The above mentioned three dictionaries with their advantages and disadvantages and due to the hard works of the authors have their great investment in the sphere of Armenian linguistics and Medieval Armenian researches. The authors have made up the dictionary of Middle Armenian with special approach, method and purpose.

In the article we touch upon the advantages and structure of the three above mentioned dictionaries and discuss several reviews of dictionaries expressed by reviewers.

### ՄԱՐԿԱՏ ՍՊԱՐԱՊԵՏԻ «ՏԱՐԵԳՐՔԻ» ԶԵՌԱԳՐԵՐԸ

Տարեիկ Աթայեան

Սմբատ Սպարապետի «Տարեգրքի» բնագիրը ներկայացուած է մեզ յայտնի մէկ տասնեակից աւելի ձեռագիր մատենաներում: Ս. Ազըլեանի<sup>1</sup>, Ս. Տէր-Ներսէսեանի<sup>2</sup>, Լ. Բաբայեանի<sup>3</sup>, Ժ. Դեղէյեանի<sup>4</sup> եւ այլոց հետազոտութիւններում տրուել են այդ ձեռագրերի հակիրճ նկարագրութիւնները, վեր են հանուել դրանց տարբերութիւնները՝ տարընթերցումների, յաւելումների ու յապաւումների տեսքով, որոշակի աշխատանքներ են կատարուել ձեռագրերի լեզուաոճական առանձնատիպութիւնների քննութեան ուղղութեամբ: Հպանցիկ նշումով առանձնացուել են նաեւ «Տարեգրքի» խմբագրութիւնները: Սակայն պէտք է նաեւ նշել, որ հետազոտողների ուշադրութեան կենտրոնում գերազանցապէս գտնուել է ստեղծագործութեան հեղինակային պատկանելութեան խնդիրը, ուստի եւ թուարկուած ձեռքբերումները հիմնականում կատարուել են հէնց այս համատեքստում: Հետեւաբար՝ ձեռագրերի նկարագրութիւնը եւ համեմատական վերլուծութիւնը յատուկ ուսումնասիրման առարկայ չի դարձել: Մինչդեռ ձեռագրերի ծագումնաբանութեան ճշտման, ինչպէս նաեւ ճիւղագրութեան կազմման խնդիրները համակողմանի քննութեան կարիք ունեն: Յատուկ ուշադրութեան է արժանի

նաեւ երկի ձեռագրերի պատմութեան վերականգնումը, քանզի հէնց այդ նիւթի վրայ հիմնուելով է հնարաւոր պարզել տուեալ ստեղծագործութեան տարածուածութիւնն ու ազդեցութիւնը պատմական այս կամ այն ժամանակահատուածում:

«Տարեգրքի» ձեռագրերի ուսումնասիրութիւնը թոյլ է տալիս եզրակացնել, որ երկը նախապէս ունեցել է Ժ. դարի երկրորդ կէս – ԺԳ. դարի վերջ ընդգրկող ժամանակագրական սահմաններ, իսկ ԺԴ. դարում դէպքերի շարադրանքը հասցրել է մինչեւ 1331 թ. իրադարձութիւնները: «Տարեգրքի» ձեռագրերը, բացառութեամբ մէկի (Վենետիկ, թիւ 1308), մեզ են հասել հէնց այս շարունակութեամբ՝ կրելով «Պատմութիւն յունաց ի Կոստանդինուպոլիս եւ Հայոց Մեծաց. յայնմ ժամանակի ժամանակագրութիւն» եւ «Սմբատ Սպարապետ, Պատմագիրք: Սոյն այս Սմբատ էր Սպարապետ Լեւոնի Դ, արքայի տանն Կիլիկիոյ, գունդուստապլ անուանեալ: Սկիզբն առնէ սա ի չորս հարիւր թուականէն Հայոց ի Գագկայ թագաւորէն, որդւոյ Աշոտայ Բագրատունւոյ. շարակարգելով հասուցանէ մինչեւ ցթուականն ՉՀԸ ցօծումն նոյն Լեւոնի Դ, որոյ էր սպարապետ» խորագրերը:

Ելնելով «Տարեգրքի» ձեռագրերի, ինչպէս նաեւ ստեղծագործութեան տեքստաբանական առանձնատիպութիւններից, հարկ է առանձնացնել գրչագրերի երկու խումբ՝ Ա եւ Բ (Բ1, Բ2 ենթախմբերով), ինչը երկի ուսումնասիրման աւելի մեծ հնարաւորութիւն կ'ընձեռնի:

Սկսենք Ա խմբի միակ ձեռագրից, որը հնագոյնն է մեզ հասած գրչագրերի շարքում:

1 Սմբատայ Սպարապետի Տարեգրքը, Վենետիկ, 1956, էջ Ե-ԺԳ:  
2 S. Der Nersessian, The Armenian Chronicle of the Constable Smbat or of the "Royal Historian", Dumbarton Oaks Papers, XII, 1959, pp. 141-168.  
3 Լ. Հ. Բաբայեան, Սմբատ Սպարապետը եւ «Տարեգրքի» հեղինակի հարցը, ՊԲՀ, 1976, թիւ 1, էջ 243-254:  
4 La chronique attribuée au Connétable Smbat, Introduction, traduction et notes par Gérard Dédéyan, Paris, 1980, p. 9-37.